կարգի, և նոքա եղեն ուրախ ոչ սակաւ, և Ե ժամուն որ ի Զ-ն մտանէր՝ շարական ասացին և Հոգոց հանգուցելոց, եւ Վարդապետն ելեալ գնաց ի Սուրբ Աստուածածին, եւ այլ ի բարեկամաց եւ յԵրուսաղէմացոց գնացին, և մեք նստաք այժմ այլ ևս Դ ժամ, եւ ելաւ եպիսկոպոսն եւ Ղազարն գնացին ի տեղիս իւրեանց զհետ արանց ոմանց, եւ զկնի նոցա գնալուն՝ եկեալ նստան փռան տղայքն վերակացուք գործոյն սպասաւորքն՝ մինչև ի յետինքն, մի մի շարական ասել Տէրտէրին ննջեցելոց նոցա. եւ յորժամ եղեւ՝ ել և գնաց Տէրտէրն և արք ոմանք ընդ նմա, և մեր սակաւ ևս կացեալ անդ՝ ելաք եւ եկաք ընդ Մղտեսուն և ընդ Մալղօջին՝ փեսային հօրքուրին իմոյ՝ ի Սուրբ Նիկողոս, եւ անդ զժամն արարեալ եւ ելաք ի տուն գնացաք։ Օրս մեր Մղտեսուն խօնչայ են բերեր ի Ղալաթու սանահօրէն իւրեանց՝ թէ տղայ է եղեր Սէմէրճու տղի Կիրակոսին։ Օրս Շապան ամիս կոչիւր ըստ բառի Տաճկաց։

Ուրբաթ (16 Մայիս) առաւօտուս Վարդապետն ի Ղալաթայ գնաց. և Շաբաթ (17 Մայիս) առաւօտուս եկաւ ի Սուրբ Նիկողոս։ Ի դէպ յետնուցս եկաւ զափուտանն։ Եւ երեկոյիս ի ժամ գնացի ի Սուրբ Նիկողոս եւ Եղիազար վարդապետն դաս ասաց զբան Իմաստնոյն Սողոմոնի, եւ յետ դասին[1]) ծանոյց ժողովրդեանն զվաղջանիլ Ռստագէս վարդապետին եւ ողորմիս ասել տաւ, և ել ի դասէն և Ամբիծք ասին և արձակեցաք. և յետ ժամուն գնացի ի Մղսոնցն և անտի ի տուն։

Շաբաթի օրիս (17 Մայիս) ընդ զափուտանին եկն եւ Մուստաֆայ[2]) փաշան՝ դարձեալ ի Պօղազէն, զի գնացեալ էր ի Միսիր և ոչ կարացեալ անցանել զՊօ-

1) դաս. 2) Մուստահայ.